ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐԺԵՑՎԱԾ ՇՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-17/1

ք. Երևան «30» Դեկտեմբեր 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, որը գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»-ը (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության Շնագիտական բաժնի (կենտրոն) շների պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **13 000 000 (տասներեք միլիոն)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան դեկտեմբերի 25-ը 2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 , N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք.Երևան, Ամիրյան-10
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900011054013	Հ/Հ 220419600550000
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 37412736
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝	Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»
Ա.Սահակյան	**Գ.Գաբրիելյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
<<30 >> Մարտ 2017 թ. կնքված
N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Կատարողը պետք է ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության ք.Երևան, Էրեբունի վարչական շրջանի Հյուսիսային -6 հասցեում գտնվող շնագիտական բաժնին (կենտրոն) պատկանող թվով 21 հատ ծառայողական, հատուկ վարժեցված շներին ապահովի անհրաժեշտ սնունդով, դեղամիջոցներով, վարժեցման, խնամքի և պահպանման համար անհրաժեշտ պարագաներով, որոնց ընդհանուր նկարագրությունը ներկայացվում է ստորև՝

1. Վարժեցվող շների համար անհրաժեշտ սնունդ

1.1 **<<ROYAL CANIN SHN MAXI STARTER M&B>>** ֆիրմայի կամ համարժեք չոր կերի ապահովում պայմանագրի շրջանակներում 100կգ,

1.2 **<<ROYAL CANIN CLUB PRO JUNIOR>>** ֆիրմայի կամ համարժեք չոր կերի ապահովում պայմանագրի շրջանակներում 160կգ

1.3 **<<ROYAL CANIN CLUB PRO ENERGY HE>>** ֆիրմայի կամ համարժեք չոր կերի ապահովում պայմանագրի շրջանակներում 1500կգ

1.4 **Բրնձի** ապահովում պայմանագրի շրջանակներում 300 կգ

1.5 **Հնդկաձավարի** ապահովում պայմանագրի շրջանակներում 500 կգ

1.6 **Տավարի** ոսկորոտ մսի պայմանագրի շրջանակներում 2500 կգ

1.7 **Կաթնաշոռի** ապահովում պայմանագրի շրջանակներում 50 կգ

1.8 **Մածունի** ապահովում պայմանագրի շրջանակներում 800 լիտր

1.9 **Խնձորի** ապահովում պայմանագրի շրջանակներում 50 կգ

1.10 **Խառը կանաչու** ապահովում պայմանագրի շրջանակներում 265 կապ

1.11 **Կանաչ պղպեղի** ապահովում պայմանագրի շրջանակներում 176կգ

1.12 **Դդմիկի** ապահովում պայմանագրի շրջանակներում 176կգ

1.13 **Գազարի** ապահովում պայմանագրի շրջանակներում 396կգ

1.14 **Ճակընդեղի** ապահովում պայմանագրի շրջանակներում 132կգ

- Կատարողը պարտավոր է շների պահպանման համար վերը նշված սննդի մատակարարվելիք քանակները ապահովել ըստ պատվիրատուի գրավոր պահանջագրի, որը կուղարկվի կատարողի էլ. փոստին՝ շնագիտական կենտրոնի մաքսային տեսուչի կողմից:

2. Վարժեցվող շների համար անհրաժեշտ դեղամիջոցների ապահովում

2.1 **<<Պատվաստման միջոց /ՎԱՆԳԱՐԴ (VANGUARD+5L4)/>>** կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 25 չափաբաժին

2.2 **<<Պատվաստման միջոց /ԲԻՈԿԱՆ (BIOKAN R)/>>** կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 25 չափաբաժին

2.3 **<<Պատվաստման միջոց /ԳԻՍԿԱՆ(GISKAN 5)/>>** կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 15 սրվակ

2.4 **<<Ճճվաթափության միջոցներ /ԱԶԻՆՈԿՍ+ />>** կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 3 ամիսը 1 անգամ 75 հաբ

2.5 **<<Ճճվաթափության միջոցներ /ԲՐՈՎԱՆՈԼ Մ/**կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 30 հաբ

2.6 **<<Մաշկային պարազիտների դեմ միջոցներ /ԲԱՐՍ (инсектициды BARS)/>>** կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 3 ամիսը մեկ անգամ 125 հատ

2.7 **<<Ախտահանիչ միջոց շների բների համար /(неостомозан или рацидол)/>>** կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 3 ամիսը 1 անգամ 20 լիտր

2.8 **<< Հագստացնող դեղամիջոց /ՌՈՄԵՏԱՐ 2% 50մլ/>>** կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 1 սրվակ

2.9 **<<Կալցիումի միջոց /ԳԵԼԱԲՈՆ + />>** կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 600 հաբ

2.10 <<**Իմունային համակարգ /ՖՈՍՊՐԵՆԻԼ/**>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 1 տուփ

2.11 <<**Իմունային համակարգ /ԳԱՄԱՎԻՏ/**>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 1 տուփ

2.12 <<**իմունային համակարգ /ԱՅՍԻԴԻՎԻՏ/**>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 1 սրվակ (100մլ)

2.13 <<**Ականջի կաթիլներ /ԲԱՐՍ/**>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 1 սրվակ (10մլ)

2.14 <<**Աչքի կաթիլներ /ԲԱՐՍ/**>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 1 սրվակ (10մլ)

2.15 <<**Հակաբորբոքային քսուկ /ԻԽՏԻՈԼ 10%/**>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 3 ամիսը 1 անգամ 3 հատ

2.16 <<**Վիրաբուժական կարի միջոցներ (N3)**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 100 հատ

2.17 <<**Վիրակապային պարագաներ ստերիլ (բամբակ, բինտ, /տարբեր լայնության/, անձեռոցիկներ)**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 20 հատ

2.18 <<**Վիրակապային պարագաներ ոչ ստերիլ (բամբակ, բինտ, /տարբեր լայնության/, լեյկոպլաստ /տարբեր լայնության/)**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 40 հատ

2.19 <<**ախտահանիչ միջոց Խլորամինի փոշի (сульфохлорантин Д или хлорамин Б)**>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 5 կգ

2.20 <<**Բժշկական ձեռնոց**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 5 տուփ

2.21 <<**Բժշկական ձեռնոց ստերիլ**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 30 հատ

2.22 <<**Ներարկիչներ (3 մլ) (5մլ)**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 150 հատ

2.23 <<**Ներարկիչներ(10 մլ)**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 70 հատ

2.24 <<**Կաթիլային համակարգ**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 50 հատ

2.25 <<**Տեղային ցավազրկող միջոց /ՆՈՎՈԿԱՅԻՆ/**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 4 տուփ

2.26 <<**ՆԵՐԱՐԿՄԱՆ ՋՈՒՐ**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 4 տուփ

2.27 <<**Հակաբիոտիկ /ԱՄՈԿՍԱՑԻԼԻՆ 15% LA/**>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 1հատ

2.28 <<**Պրոֆիլակտիկ միջոց /ԴԻՊԼՈԿԱՐԲ, ԻՄԻԴՈԿԱՐԲ/**>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 1 հատ

2.29 <<**Վիտամին B համալիր (VITAMIN B COMPLEX)**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 հատ

2.30 <<**Ադրենալին (Adrenalin)**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 տուփ

2.31 <<**ներքին արյունահոսությունը կանխող միջոց /ՎԻԿԱՍՈԼ/**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 2 տուփ

2.32 <<**Ներքին արյունահոսությունը կանխող միջոց /ԴԻՑԻՆՈՆ/**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 1 տուփ

2.33 << **Հակամանրէային միջոց /ՖՈՒՐԱԶՈԼԻԴՈՆ/**>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 40 տուփ

2.34 << **Ցավազրկող միջոց /ԴԻԿԼՈՖԵՆԱԿ/**>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 3 տուփ

2.35<< **Պլազմա փոխարինող դեղամիջոց /Նատրիումի քլորիդ (Sodium chloride)/**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 10 հատ

2.36 <<**Հորմոնային միջոց /ԴԵՔՍԱՄԵՏԱԶՈՆ/**>> կամ համարժեք պայմանագրի շրջանակներում 1 անգամ 1 տուփ

2.37 << **Էլեկտրոլիտ բալանսի վերականգման միջոց / ՌԻՆԳԵՐ/** >> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 5 հատ

2.38 <<**Էլեկտրոլիտ բալանսի վերականգման /Գլյուկոզա 5% /**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 3 հատ

2.39<<**Թունավորման և ալերգիայի դեմ միջոց /Կալցիումի քլորիդ/** >> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 1 տուփ

2.40<<**Տեղային ցավազրկող միջոց /Լիդոկայինի հիդրոքլորիդ/**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 4 տուփ

2.41 <<**Բժշկական Սպիրտ**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 10 շիշ

2.42<<**Հակամիկրոբային, հակասեպտիկ միջոց /Յոդին 5% սպիրտային լուծույթ/**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 5 սրվակ

2.43<<**Հակամիկրոբային, հակասեպտիկ միջոց /Ջրածնի գերօքսիդ 3%/**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 10 սրվակ

2.44<<**Հակամիկրոբային, հակասեպտիկ միջոց /Բրիլիանտե կանաչ 1% սպիրտային լուծույթ (Зеленка)/**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 5 հատ

2.45<<**Արագ դիագնոստիկ թեստ շների ժանտախտի համար**>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 5 հատ

2.46<<Արագ դիագնոստիկ թեստ շների պարվովիրուսային էնտերիտի համար>> պայմանագրի շրջանակներում 1 անգամ 5 հատ

- **Կատարողը պարտավոր է վերը նշված դեղամիջոցների մատակարարվելիք քանակները ապահովել ըստ պատվիրատուի գրավոր պահանջագրի, որը կուղարկվի կատարողի էլ. փոստին շնագիտական կենտրոնի մաքսային տեսուչի կողմից: Դեղամիջոցների պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝**

  ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

  բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

  գ. առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

3. Վարժեցվող շների վարժեցման, խնամքի և պահպանման համար անհրաժեշտ պարագաների ապահովում

3.1 <<Շերեփ մեծ>>-5 հատ

3.2 <<Մեծ դանակ ունիվերսալ>>-5 հատ

3.3 <<Մեծ դանակ մսի մշակման համար>>-2 հատ

3.4 <<Մեխանիկական սրսկիչ սարք>>-2 հատ

3.5 <<Վզկապ /Hunter Vario-Basic AIU-Strong/>> կամ համարժեք -14 հատ

3.6 <<Սանձ ծառայողական շների համար>>-10 հատ

3.7 <<Շնաթոկը /Hunter Vario-Basic/>> կամ համարժեք -14 հատ

3.8 <<Դնչկալ ծառայողական շների համար>>-6 հատ

3.9 <<Խաղալիք գնդակ>>-40 հատ

3.10 <</Trixie Ապպորտ/>> կամ համարժեք -40 հատ

3.11 <<Սանր>>-20 հատ

3.12 <<Ման կերի և ջրի համար>>-30 հատ

3.13 <<Շարժական վանդակ մեծ շների համար>>-2 հատ

3.14 <<Սպունգ>>-30 հատ

3.15 << Հատակ լվանալու փայտ դույլով >>-22 հատ

3.16 << Հատակ լվանալու փայտ սպունգե գլխիկով >>-22 հատ

3.17 << Գոգաթիակ ավելով >>-22 հատ

3.18 <<Շնագիտական կենտրոնի համար թմրանյութերի հոտային նմանակման հավաքածու N8MO>> կամ համարժեք -1 հատ

3.19 <<Շների համար անձնագրեր>>-20 հատ

- **Կատարողը պարտավոր է շների պահպանման համար վերը նշված ապրանքների մատակարարվելիք քանակները ապահովել պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում :**

Պատվիրատու	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7	ք.Երևան, Ամիրյան-10
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	
Հ/Հ 900011054013	Հ/Հ 220419600550000
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 37412736
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար	Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»
Ա.Սահակյան	**Գ.Գաբրիելյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 2
<< 30 >> Դեկտեմբեր 2017 թ. կնքված
N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց*

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Մինչև 2017 թ. դեկտեմբերի 25-ը	**Ընդամենը Տարի**
1	4239	Շների պահպանման ծառայություններ				4 940 000	4 940 000	4 940 000	9 100 000	9 100 000	9 100 000	13 000 000	13 000 000	13 000 000	**13 000 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

Պատվիրատու
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»
ք.Երևան, Ամիրյան-10
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 220419600550000
ՀՎՀՀ 37412736
Ա/Ձ «Գաբրիել Գաբրիելյան»

Գ.Գաբրիելյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
<< 30 >> Հոկտեմբեր 2017 թ. կնքված
N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<< 30 >> Հոկտեմբեր 2017 թ. կնքված
N ՊԵԿ-ԲԸՀ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն